ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՆԱԾԻՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ

1. Խնդրի դրվածքը

Արդի աշխարհում ազգային մշակույթի անքակտելի բաղադրիչը և ազգերին բնորոշող իրողություններից մեկը տոներն են ու դրանց բնորոշ կամ փոխկապակցված ծեսերը, որոնք մշակույթի լայն համապատկերում կազմում են տոնածիսական առանձին համակարգ։

Տոնածիսական համակարգը գտնում է անընդհատ շարժման ու փոփոխության մեջ՝ ինքնաթարմացվելով ու ինքնալրացվելով։

Տոնածիսական համակարգը խիստ շարժուն, փոփոխական երևույթ է, որը հնարավորություն է տալիս համակարգի բաղադրիչներին առավել կամ սակավ կերպափոխումներով հաղթահարելու համակարգային փոփոխությունները։ Դա է պատճառը, որ հայկական բազմաթիվ հեթանոսական տոներ՝ իրենց բնորոշ ծիսակարգերով, որոշակի փոփոխություններով պահպանվեցին նաև քրիստոնության ընդունումից հետո։ Հատկապես շեշտելի է հայկական բազմաթիվ տոների և ծեսերի գոյության և զարգացման անընդհատությունը, որով նրանք ձեռք են բերում բացառիկ կարևորություն հայ մշակույթի համակարգում։

Արդի փուլում տեղի ունեցող փոփոխությունների պայմաններում հայկական տոնածիսական համակարգի, դրա առանձնահատկությունների և հասարակական կյանքում տոների և ծեսերի դերի ու դրսևորումների քննությունն ունի կարևոր գիտական, հասարակական և կիրառական նշանակություն։

2. Ծրագրի նպատակը և խնդիրները

Ծրագրի նպատակը հայկական տոների և ծեսերի պատմական հետագծի և հասարակության շրջանում տոնածիսական համակարգի դրսևորումների և առանձնահատկությունների քննությունն է։

Ծրագրի արդյունավետ իրականացման համար խնդիր է դրված՝

2.1. ուսումնասիրել հայկական տոների և ծեսերի ձևավորման պատմական ընթացքը,

2.2. քննության առնել առանձին տոների և ծեսերի ծագումը և առանձին տոների և ծեսերի փոխկապակցվածությունը,

2.3. ներկայացնել հայության շրջանում ներկայումս առավել տարածված տոներն ու ծեսերը, դրանց ընթացակարգերն ու դրսևորումներն ըստ պատմաաշխարհագրական տարբեր միջավայրերի (մարզեր, համայնքներ, քաղաքներ, գյուղեր),

2.4. հետազոտել Հայաստանի քաղաքին և գյուղին բնորոշ տոներն ու ծեսերը,

2.5. ձևավորել հայկական տոների և ծեսերի վերաբերյալ (կազմակերպում, մասնակցություն, ընթացք, ավարտ և ամփոփում) տեղեկատվական բազա,
2.6. պարզաբանել հայկական տոնածիսական համակարգի զբոսաշրջային գրավչությունը:

3. Ծրագրի իրականացման ձևաչափը

3.1. Ծրագիրն իրականացվելու է 1-ամյա դրամաշնորհի տրամադրմամբ երկու մասնագետներից բաղկացած խմբի ձևավորման և իրականացվող ուսումնասիրությունների արդյունքների հրատարակման ու հանրայնացման ձևաչափով:
3.2. Հետազոտության ընթացքում և ավարտից հետո թեման ուսումնասիրող մասնագետները մասնակցում են հետազոտության թեմայով հանրայնացմանը վերաբերող քննարկումներին:

4. Ծրագրի իրականացումը

Ծրագիրն իրականացվելու է հետևյալ հաջորդականությամբ.
4.1. հայկական տոնածիսական համակարգի ուսումնասիրության ուղղությունների սահմանում, մրցույթի հրավերի պատրաստում և հրապարակում,
4.2. ֆինանսավորման համար ներկայացվող հայտերի համար բովանդակային և ֆինանսական պարտադիր չափորոշիչների սահմանում,
4.3. հայտերի փորձաքննության հիմքով ֆինանսավորման որոշման կայացում,
4.4. թեմայի իրականացում և արդյունքների ամփոփում:

5. Ծրագրի ժամանակային սահմանները և սկզբունքները

5.1. Ծրագրի իրականացման համար սահմանվում է 1 տարի ժամկետ, որի ընթացքում ֆինանսավորվելու է մրցութային հիմունքներով ընտրված 1 թեմա: Ժամկետի ավարտին կատարված աշխատանքների ամփոփման արդյունքում կորոշվի ծրագիրը շարունակելու և հետազոտությունը խորացնելու հարցը:
5.2. Հետազոտության արդյունքները հիմք են հանդիսանալու տոների և ծեսերի վերաբերյալ հանրայնացման խոշոր ծրագրերի իրականացման համար (հանրամատչելի տեղեկատվություն, հանրային լայն մասնակցությամբ միջոցառումներ, տոնակատարությունների և այլն):

6. Ակնկալվող վերջնարդյունքները

6.1. Ծրագրի ավարտին նախատեսվում է ունենալ ամփոփիչ հետազոտական տեքստ, որտեղ՝
6.1.1. ներկայացված է ամբողջական պատմական ակնարկ հայկական տոների, ծեսերի ծագման և զարգացման վերաբերյալ,

6.1.2. տրված է խորքային պատկերացում առանձին տոների և ծեսերի փախկապակցվածության մասին,

6.1.3. առկա են տեղեկություններ հայկական առանձին տոների և ծեսերի ընթացակարգի, դրանց՝ հանրային մասնակցության ձևերի և ձևաչափերի մասին,

6.1.4. պարզաբանված են առանձին տոների և ծեսերի՝ Հայաստանի այս կամ այն պատմաաշխարհագրական միջավայրին բնորոշ առանձնահատկությունները,

6.1.5. ի մի են բերված Հայաստանի մարզերում, համայնքներում քաղաքներում և գյուղերում ազգային տոների նշման և ծեսերի կատարման առանձնահատկությունները։

6.2. Ծրագրվում է ստանալ նաև հայկական առանձին տոների և ծեսերի ընթացակարգերը ներկայացնող պատկերազարդ տեքստ՝ դրանց մասին պատմական, աշխարհագրական և բովանդակային տեղեկություններով։

7. Ծրագրի հեռանկարը

Ծրագրի հեռանկարը հայկական տոնածիսական համակարգի վերաբերյալ հենքային ուսումնասիրությունները խթանելու ճանապարհով ոլորտի նկատմամբ հետաքրքրության բարձրացումն է և նոր ուսումնասիրությունների խրախուսմամբ՝ հետազոտությունների խորացումն ու աստիճանական ամբողջացումը։

8. Ծրագրի ֆինանսավորումը

Ծրագիրը ֆինանսավորվելու է Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի տրամադրած դրամաշնորհով։